


ԶԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՐ ԶԵՆՔԵՐՈՒՄ Է, ԼԵՏԱԶՈՏՎԵԸ ԵՎ ԴՍԶԴՍՆԵԸ ԱՅՆ



Չարկերակային գերճնշման և շաքարային դիաբետի զարգացման ռիսկային տարիքային խմբին են պատկանում 35-ից 68 տարեկան անձինք:

Հ ա յ ա ս տ ա ն ու մ . . .

Հիպերտոնիայով հիվանդ է շուրջ 115 000 մարդ. յուրաքանչյուր տարի հայտնաբերվում է ավելի քան 25 000 նոր դեպք:

Շաքարային դիաբետով հիվանդ է շուրջ 70 000 մարդ. յուրաքանչյուր տարի հայտնաբերվում է ավելի քան 8500 նոր դեպք:

Սրտանոթային հիվանդություններից և շաքարային դիաբետից մահացությունը կազմում է 55%:

Հիվանդությունների մեծամասնությունը կրում է **քաքնված բնույթ**, այդ իսկ պատճառով դրանց վաղաժամ հայտնաբերումը խիստ կարևոր է:

Այցելելով պոլիկլինիկա կամ ամբուլատորիա՝ Դուք հնարավորություն կունենաք կանխարգելիչ զարկերակային գերճնշման և շաքարային դիաբետի զարգացումն ու դրանց հետևանքով առաջացած հետագա բարդությունները:

Ժամանակին կանխարգելելով հիվանդությունները՝ կարելի է խուսափել.

- ♥ ուղեղի կաթվածից (ինսուլտ)
- ♥ սրտամկանի սուր ինֆարկտից
- ♥ երիկամների ախտահարումից
- ♥ տեսողության խանգարումներից
- ♥ հղիության և հետճննդյան շրջանների բարդություններից
- ♥ վերջույթների ախտահարումից (զանգրեմա):

ԶԱՐԿԵՐԱԿԱՅԻՆ ԳԵՐՃՆՇՄԱՆ «ԱՌԱՎՅԱՅ» ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆ Է

Չարկերակային գերճնշումը սրտանոթային հիվանդությունների զարգացման կառավարելի ռիսկի գործոն է, որով պայմանավորված է այդ հիվանդություններից մահացության շուրջ 50%-ը:

Չարկերակային գերճնշումն արյան ճնշման քրոնիկ բարձրացումն է (140/90 մմ ս.ս և ավելին), որը սրտից «պահանջում է» գործադրել սվորականից ավելի մեծ ջանքեր՝ արյունը դեպի արյունատար անոթներ մղելու համար:



ՈՐՈՆՔ ԵՆ ԶԱՐԿԵՐԱԿԱՅԻՆ ԳԵՐՃՆՇՄԱՆ ԵՎ ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՆՎԱՏՆԵՐՆ ՈՒ ԱՆՏԱՆԻՇՆԵՐԸ

- ընդհանուր թուլություն
- հոգնածություն
- գլխացավ
- գլխապտույտ
- անքնություն
- մատների թմրություն

ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԸ «ԴԱՐԻ» ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆ Է

Շաքարային դիաբետը բնորոշվում է արյան մեջ գլյուկոզի պարունակության քրոնիկ բարձրացմամբ և նյութափոխանակության խանգարումներով:

Հիվանդության ախտորոշման և վարման կարևորագույն պայմանն արյան մեջ գլյուկոզի պարունակության որոշումն է:

Մազանոթային (մատից վերցրած) արյան մեջ քաղցի գլյուկոզի պարունակությունը չպետք է գերազանցի 6.1 մմոլ/լ:

Շաքարային դիաբետն ի հայտ է գալիս, երբ.

- ենթաստամոքսային գեղձը բավարար քանակությամբ ինսուլին չի արտադրում (ՇԴ-1 տիպ)
- օրգանիզմը չի կարողանում արդյունավետ օգտագործել ենթաստամոքսային գեղձի կողմից արտադրված ինսուլինը (ՇԴ-2 տիպ)



- ընդհանուր թուլություն
- դյուրագրգռություն
- քաշի ավելացում կամ կորուստ
- ծարավի արտահայտված զգացողություն
- տեսողության վատթարացում
- հաճախամիզություն (հատկապես գիշերային)
- վերքերի դանդաղ ապաքինում